

պատմումէն ինծի կը դառնար իմ ալ շատ մօտիկ անցեալը, գեղէն քաղաք, հազար դժուարութեանց սլաքներով չարչրկուն իմ ծարաւը այդ ուսումին ետեւէն, որուն անունը մօրս բառերով մարդ ըլլալն էր այդ օրերուն: Ի՛նչ սրտայոյզ հերոսութեամբ մը մերժելով իմ բազուկներուս կարելի արդիւնքը տունին՝ մայրս զիս յօժարէր պիտի աւելի հեռու, աւելի «մենծ» դպրոց մը դրկելու, գրեթէ ծերութեան դուռներուն, աչքերէն ու կեանքէն հաւասարապէս տկարացած, բայց շարունակելով պահել իր ուխտը, որբ իր գաւկըները իրենց ճակատագիրներուն տիրացման հանելու, որ հոմանիչ էր քսանը անցնելու...

Ընկեր Մաթիկին Ճեմարանը անշուշտ աւելի կ'արժէր, քան իմ Արմաշը, որուն մասին խօսեցայ արդէն: Մաթիկին խորունկ, խանդավառ հայրենասիրութիւնը, իր ժողովուրդին երկիրն ու պատմութիւնը ջուրի պէս գիտնալու իր հպարտութիւնը, ու հակառակ կրօնական կրթութեան եւ ռուս կասկածոտ հսկողութեան, այդ Ճեմարանին աշակերտող երիտասարդութեան խորունկ ազատամտութիւնը, առաջամարտիկ գաղափարներու հանդէպ սրտառուչ ընկալչութիւնը աւելի քան տպաւորիչ էին: Անիկա հիացումէ զատ անկեղծ բառեր ունէր իր ուսուցիչներուն հասցէին, արեւելահայ բանասիրութեան ու պատմական ուսումնասիրութեանց մէջ մեծ վարկ վայելող անձնաւորութիւններ բոլորը, համալսարանական լայն պատրաստութեամբ, մտքի անկաշկանդ հորիզոններուն բարիքով, զիրենք երկիւղածութեամբ ու կիրքին հասնող ուշադրութեամբ մը ունկնդրող տղոց մատաղ հոգիները կերպադրող անորակելի այն տեմպով, որ սերունդ մը կը թելադրէ: Ստոյգը այն է, որ աւելի յետոյ ես պիտի հաստատէի Մաթիկին տպաւորութեանց վաւերականութիւնը բոլոր այն մարդոց վրայ, որոնք անցեր էին այդ վառարանին քուրայէն: Արեւելահայ այն մտաւորականութիւնը, որ 1890էն մինչեւ մեր օրերը իր ուսերուն ունեցաւ ո՛չ միայն արեւելահայոց քաղաքական ու գրական ճակատագիրը, այլեւ ամբողջ հայ ժո-